«ՎԱՐԴԱՆԱՆՔ ԿՐԹԱՀԱՄԱԼԻ» ՍՊԸ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեման՝ <<Բնավորության ձևավորում՝ չշփվող երեխաների շրջանում>>

Դասընթացավար՝ Ա.Արամյան

Ուսուցիչ՝ Կ.Թումասյան

Վանաձորի Հ.Թումանյանի անվան N3 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն **3**

Բաժին 1 ,,Ինչպե՞ս կրթելու ընթացքում նպաստել բնավորության ձևավորմանը,, ... **4**

Բաժին 2 Թեմայի շուրջ դիտարկումներ **9**

Եզրակացություն **13**

Օգտագործված գրականության ցանկ **14**

Բնավորության ձևավորում՝ չշփվող երեխաների շրջանում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականություն: Ներկայումս ՀՀ դպրոցներում ուսուցման ժամանակ ընդգրկվում են և՛ առանց դժվարությունների նորմալ երեխաներ, և՛ դժվարություններ ունեցող աշակերտներ: Ուսուցման գործընթացում հաճախ են հանդիպում չշփվող, մեկուսացած աշակերտներ:

Տարրական դասարաններից է սկսվում և շարունակվում բնավորության ձևավորումը:Հենց այդ տարիքից սկսվում է կոլեկտիվի ձևավորում, ուսուցիչ-աշակերտ և աշակերտ-աշակերտ փոխհարաբերությունները:Այս շրջանում կարևոր է ապահովել շփում:Քանի որ ուսուցչի խնդիրը միայն սովորել սովորեցնելը չէ,այլ ուղղորդել դառնալու հասարակության անդամ: Թեման արդիական է նաև նրանով,որ ներկայումս ուսումնական գործընթացում շատ են հանդիպում ԿԱՊԿՈՒ երեխաներ,իսկ նման երեխաների հետ աշխատելու փորձ և մեթոդներ ուսուցիձների զգալի մասը չունի:Յուրաքանչյուր ուսուցիչ ինքնուրույն պիտի փնտրի և գտնի այն հնարները,միջոցները,որով կկարողանա հասնի արդյունքի:

Ինչպես գիտենք շփումը մեծ դեր ունի բնավորության ձևավորման և ուսումնկան գործընթացի համար: Դասարանում ունենալով նման աշակերտներ,առնչվելով խնդրին,իմանալով կրտսեր դպրոցականների և դեռահասների տարիքային առանձնահատկությունները,գիտակցում ենք, որ նման խնդրի լուծումը պահանջում է ուսումնասիրություն:

Հետազոտության նպատակը՝շփման խնդիրներ ունեցող աշակերտների շրջանում ձևավորել բնավորություն,մասնակից դարձնել քննարկումներին,ներգրավել կոլեկտիվում:

Նպատակին հասնելու համար

1.ուսումնասիրել եմ նման երեխաների

2.ուսումնասիրել եմ համապատասխան գրականություն և երեխաների տարիքային առանձնահատկությունները

3.իրականացրել եմ քննարկումներ,փորձի փոխանակում

4.դիտել եմ համապատասխան տեսանյութեր,օրինակներ

5.մշակել եմ մեթոդներ,որոնց միջոցով կարելի է հաղթահարել նման խնդիրը:

Այսպիսով աշխատանքը կազմել եմ երկու բաժնով՝տեսական և գործնական:Տեսական մասում ընգրկել եմ եմ խնդրի արդիականությունը,տարածվածությունը,այլ մասնագետների առաջարկած մեթոդները:Ընդգրկված նյութերը ներառում են և՛ կրտսեր դպրոցական տարիքը,և՛ դեռահսության

տարիքը:Աշխատանքի երկրորդ բաժնում ներկայացրել եմ իմ դիտվածքով և օրինաների փորձով:Ներկայացրել եմ հասած հաջողությունները և ձախողումները:

Աշխատանքում ներառել ենք նաև եզրակացություն,որում կատարել ենք մեր աշխատանքների ամփոփում:

1. Աշխատանքում ներառել եմ եզրակացություն, որը կատարել եմ դիտարկումների հիման վրա:
2. Հետազոտական աշխատանքին կից ներկայացնում եմ սալիկահանդես:

ԲԱԺԻՆ1 Ինչպե՞ս կրթելու ընթացքում նպաստել բնավորություն կազմավորմանը

<<Բարի լինելը մեծ արժանիք է,սակայն ավելի մեծ արժանիք է
ուրիշներին բարի լինել սովորեցնելը>>:

Ակներևաբար այն,որ մենք՝ մանկավարժներս,պետք է լիովին ընդունենք այն փաստը,որ մեզ է վստահված կրթել յուրաքանչյուր երեխայի թե՛ սիրտը, թե՛ միտքը:Մեր առջև դրված նպատակը դպրոցում համախմբված մարդկանց սրտերի ու մտքերի պատշաճ հատկանիշների զարգացումն է:Այդ հատկանիշները պետք է խարսխված լինի փոխադարձ հարգանքի և պատասխանատվության վրա:Այս կարգի դաստիարակությունը ներազդում է այն ամենօրյա փոխհարաբերությունների վրա,որոնք հաստատված են մեծահասակների և երեխաների միջև:

Բնավորությունը ձևավորվում է մարդու կյանքի ընթացքում: Նրա ծագման աղբյուրներն ու առաջին դրսևորումները պետք է փնտրել կյանքի ամենասկզբում:Երեխայի բնավորության ձևավորման մեջ հիմնական դեր է խաղում նրա շփումը շրջապատի մարդկանց հետ: Իրեն բնորոշ արարքներում և վարքի ձևերում երեխան առաջին հերթին ընդօրինակում է իր մոտիկներին: Ընդօրինակման և հուզական ամրապնդման միջոցով նա յուրացնում է մեծահասակների վարքի ձևերը: Բնավորության կայացման համար սենզիտիվ փուլը կարելի է համարել 2-3 տարեկանից մինչև 9-10 տարեկանը, երբ երեխաները բավական շատ և ակտիվ հաղորդակցվում են շրջապատող մեծահասակների, ինչպես նաև տարիքակիցների հետ: Այս փուլում նրանք բաց են ազդեցության համար: Այս տարիքում մեծահասակներն օգտվում են երեխայի վստահությունից, հնարավորություն ունեն ազդելու նրանց վրա խոսքով, արարքով, ինչն էլ բարենպաստ պայման է ստեղծում անհրաժեշտ վարքային ձևերի ամրապնդման համար:Երեխայի բնավորության կայացման համար կարևոր են մեծահասակների՝ միմյանց հետ հաղորդակցվելու ոճը, ինչպես նաև երեխային մեծահասակի դիմելու միջոցը: Առաջին հերթին, դա վերաբերում է ծնողներին: Այն, թե ինչպես են նրանք վերաբերվում երեխային, շատ տարիներ հետո դառնում է իր երեխաների հետ նրա դիմելու միջոցը:[1]

Մարդու բնավորության մեջ ամենից առաջ ամրապնդվում են այնպիսի գծեր, ինչպիսիք են բարությունը, շփվողականությունը, զգայունությունը և նրանց հակադիր որակները՝ եսասիրություն, անտարբերություն մարդկանց նկատմամբ: Կան տվյալներ, որ այս գծերի ձևավորման սկիզբը տարիքն է:

Աշխատանքի մեջ առավել վառ դրսևորվող բնավորության գծերը՝ բարեխղճություն, պատասխանատվություն, աշխատասիրություն, ձևավորվում են վաղ մանկության և նախադպրոցական տարիքում: Նրանք ձևավորվում և ամրապնդվում են երեխային հասանելի տնային աշխատանքի ձևերում: Նրանց ձևավորման վրա մեծ ազդեցություն է թողնում մեծահասկաների խրախուսանքը:Դպրոցական սկզբնական տարիներին ձևավորվում են մարդկանց հետ հարաբերություններում դրսևորվող բնավորության գծերը:

Դրան նպաստում է երեխայի հաղորդակցման ոլորտի ընդլայնումը: Եթե այն, ինչ երեխան՝ որպես անձ, ձեռք է բերել ընտանիքում,աջակցություն է ստանում դպրոցում, ապա համապատասխան բնավորության գծերը ամրապնդվում են և հիմնականում պահպանվում հետագայում:Բնավորության ինքնադաստիարակությունը ենթադրում է, որ մարդն ունակ է ինքնաքննադատորեն մոտենալու իրեն, տեսնելու իր թերությունները, ինչը թույլ կտա առանձնացնելու այն գծերը, որոնցից կցանկանար ազատվել: Բնավորության դաստիարակության մեջ մեծ դեր ունեն մեծերը: Ընդ որում, ընդօրինակման առարկան պետք է իրական լինի: Բնավորության ձևավորման վրա ակտիվ ազդեցություն է թողնում հասարակական գործունեությունը, այն առաջացնում է պատասխանատվություն, պարտքի զգացում, կազմակերպվածություն: Բնավորության ձևավորման արդյունավետ միջոց է աշխատանքը: Ուժեղ բնավորություն ունեն այն մարդիկ, ովքեր մեծ խնդիրներ են դնում աշխատանքում և հասնում դրանց լուծմանը: Ներազդում է նաև որոշումներ ընդունելու,պատասխանատվությունն ու ռեսուրսները բաշխելու վրա,դասավանդման և ուսումնառության ողջ ընթացքի վրա:

Բնավորության դաստիարակություն ունի երկու կարևոր աստիճան. ինքնաճանաչում և ինքնակառավարում:

Շատ մեծ և կարևոր նշանակություն ունի դաստիարակության դերը առավել մանկական տարիքում: Մարդը, մարդը է դառնում միայն դաստիարակության շնորհիվ. <<յուրաքանչյուր երեխայից կարելի է մարդ ստանալ>>:Ուսուցիչները պետք է գիտակցեն,որ ընդունակ,ջանասեր և ուսուցչի ներգործությանը ենթարկվող երեխաների կողքին կան նաև անընդունակ,ծույլ,կամակոր,չենթարկվող երեխաներ,որոնց արհեստավարժ մանկավարժի հոգեբանությամբ,տարբեր մեթոդների կիրառմամբ պետք է ,հարկավոր է կրթել ու դաստիարակել:Խստորեն պետք է առանձնահատուկ վերաբերմունք ցուցաբերել տարիքային տարբեր խմբերին(ես դիտարկել եմ կրտսեր դպրոցական և դեռահասության տարիքը):

Շատ կարևոր է,որ մենք՝ ուսուցիչներս,լիովին գիտակցենք մեր՝ որպես ցանկալի վերաբերմունք ու բարոյական հատկանիշներ մոդելավորող անձանց դերերը:Պետք է գիտակցենք այդ պատասխանատվությունը աշակերտների առջև:Մենք պարտավոր ենք՝

1.Ստեղծել պայծառ , հետաքրքիր մթնոլորտ:

2.Պահպանել հումորով և ուրախությամբ լեցուն միջավայրի առկայություն:

3.Հարգանքով վերաբերվել յուրաքանչյուր երեխայի:

4.Հավատալ,որ ամեն երեխա կարող է հաջողության հասնել:

5.Լինել ազնիվ,ընդունել սեփական սխալները:

6.Կարողանալ լսել և պահպանել գաղտնիությունը:

7.Լինել հետևողական և արդարամիտ:

8.Գնահատել գործադրվող ջանքերը:

9.Գնահատել ինքնատիպությունը,այլ ոչ թե՝ միամտությունը:

10.Ունենալ բարձր ակնկալիքներ՝իրենից և մյուսներից:

11.Շարունակել երեխայի զարգացման վերաբերյալ սեփական գիտելիքների կուտակումը:

12.Հիշել,որ շատ կարևոր է ոչ միայն այն,թե ի՞նչ է ուսուցանվում,այլ ինչպե՞ս է ուսուցանվում: Դասասենյակում երեխաները շատ կարևոր դասեր են քաղում նրանից,թե ինչպիսի վերաբերմունքի են իրենք արժանանում և թե ինչպես են իրենք վերաբերվում մյուսներին:

Տարրական դասարանի աշակերտների շրջանում առկա է ինքնագնահատման և ակադեմիական առաջադիմության ավելի բարձր մակարդակ,երբ ուսուցիչը հետևողականորեն խթանում էնրանց ինքնուրույնությունը դասարանում:Դասարանում հնարավորին չափ շատ աշխատանքային կենտրոնների կազմավորումը տարրական դասարանի աշակերտների մեջ ինքնուրույնության զարգացման իմաստով մեծ կարևորություն է ստանում:

Դպրոցում խիստ ընդարձակվում է երեխայի սոցիալական հարաբերությունների շրջանակը, և ուսուցչի խնդիրն է կազմակերպել դրանք դպրոցականի գործունյա սիրո սկզբունքի վրա բոլորի հանդեպ,ում հետ նա անհրաժեշտորեն սերտ հարաբերությունների մեջ է մտնում:

Նրա սոցիալական կապերը,ավելի ու ավելի ընդարձակվելով,պետք է հանգեցնեն այն բանին,որ նա իրեն գիտակցի որպես մարդկային մեծ ամբողջի մի մասը և իր սերը տարածի ամբողջ մարդկության վրա: Կարևոր է բարոյական արարքների մեջ երեխաներին վարժեցնելը,որոնք նրանցից պահանջում են ինքնատիրապետում,տոկունություն,ձևավորում են նրանց կամքը: Բնավորության ձևավորման մեջ մեծ տեղ ենք տալիս նաև սերը դեպի հայրենիքը:Դրա համար դասերին ներառել ենք մերօրյա քաջարի,անձնազոհ քաջերին:

Դրական արժեքների ուսուցմանն ուղղված մթնոլորտը պետք է խթանի աշակերտի ինքնուրույն,անկախ մտածողությունը,այլ ոչ՝ինքնանպատակ հնազանդությունը:

Պետք է աշակերտներին հնարավորություն տալ որոշումներ ընդունելու:Երբ այսպիսի հնարավորություններ է տրվում,նույնիսկ ԿԱՊԿՈՒ աշակերտներից որոշների մոտ առաջանում է հետաքրքրություն,նկատվում է ակտիվություն:Այս առումով կարևորում ենք հատկապես ճանաչողական էքսկուրսիաները:Չշփվող,փակ երեխաները հաճախ սկսում են ''բացվել'' հենց դպրոցից դուրս:

Կարևոր է աշակերտներին հնարավորություն տալ որոշումներ ընդունելու այն ամենի մասին,ինչ կատարվում է իրենց շուրջ,քան հսկողության տակ պահել նրանց:Այս ճանապարհով աշակերտները ձեռք կբերեն ապագայում իրենց համար շատ օգտակար հմտություններ:Վերջին հաշվով ,երեխաները չպետք է դիտվեն ընդամենը որպես խմորվող մեծահասակներ:Նրանք անհատներ են,որոնց պահանջմունքներն ու իրավունքները,ունեցած փորձառությունները լուրջ վերաբերմունքի պետք է արժանանա մեր կողմից:<<Չպետք է աշակերտներին դաստիարակել սոսկ ժողովրդավարությանը նախապատրաստելու միտումով:Նրանց պետք է հենց այսօր տալ նման պայմաններում ապրելու հնարավորություն>>:

Շփման դժվարություններ ունեցող երեխան առաջին հերթին պետք է վստահի մեզ,մեր կողմից նկատի բարություն,նրբանկատություն,ձայնի բարեկամական երանգ:Ահա այն միջոցները,որոնցով հնարավոր է կապ և շփում ստեղծել նման երեխաքների հետ:

Եթե շեշտը դնենք կրտսեր դպրոցականների վրա,ապա կնկատենք,որ կա ցանկություն ամեն ինչ ճիշտ անելու,ազնվություն:Մեզ մնում է ցույց տալ,թե որն է այդ ,,ճիշտը'':Նրանք շատ ազնիվ և միամտորեն կարող են արտահայտել իրենց կարծիքը,եթե վստահեն մեզ:Եթե լսենք բոլորի կարծիքները և հարգենք այն,ապա այս ձևով կսերմանենք փոխադարձ հարգանք:

Երեխաներն ամենից լավ յուրացնում են էթիկայի կանոններն ու ձևավորում են իրենց բնավորությունն,երբ հնարավորություն ունեն առաջնորդվելու չափահասների օրինակներով: Երեխաներն աստիճանաբար հասկանում են , որ բոլոր մարդիկ կարող են հետևել նույն արժեքների և սկզբունքների՝ անկախ իրենց ազգային և մշակութային տարբերություններինից:Նրանք ըմբռնում են,որ բոլոր մարդիկ արժանի են հարգանքի՝անկախ արտաքինից ու այլ առանձնահատկություններից:

Առավոտյան հանդիպումը դասավանդման հատուկ մոտեցում է,որն օգնում է միաձուլել ուսումնական և սոցիալական հմտությունների զարգացման ծրագրերը՝ ուսուցիչների և

աշակերտների միջև հոգատարության և նրբանկատության վրա հիմնված փոխհարաբերությունների հաստատման նպատակով:

Արտադասարանային հանդիպումները(տարբեր ձևաչափերով՝էքսկուրսիա,խնջույք,գրական-գեղարվեստական միջոցառումներ և այլն)կանոնավորում,հնարավոր է դարձնում երեխաների համար այնքան կարևոր հատկությունների և վարքագծի,էթիկայի մշակումն ու ձևավորումը:

Խիստ կարևոր է դասամիջոցների ժամանակ դասընկերների փոխհարաբերությունները,ինչպես նաև ընդգրկումը պասիվ, չշփվող, ինքնամեկուսացող երեխաներին:

Ես վստահ եմ,որ ընտանիքների և դպրոցների համագործակցության,ուսուցիչների բարության ու ազնվության,զարգացումային համապատասխանատվության սկզբունքով իրականացվող ուսուցման արդյունքում կարող են կառուցվել ավելի կատարյալ հասարակություն:

Ուսուցիչը դասարանում օրվա ընթացքում ստանձնում է տարբեր դերեր:Նա առաջին հերթին պատասխանատու է տարբեր երեխաների ուսուցման համար:Ուսուցչի վրա է դրված ուսուցման,ինչպես նաև մեծատառով ''Մարդ ''ձևավորելու այնպիսի եղանակների ընտրության պատասխանատվությունը,որոնք պետք է դառնան հաջողության հասնելու գրավականը:

Ուսուցիչը ժամանակի և տարածության մի նրբանկատ ճարտարապետ է,ով երեխաների համար հստակ կառույցներ է նախագծում:Նա ստեղծում է ազատ և անկախ միջավայր,որտեղ երեխան գիտի,թե իրենից ինչ են ակնկալում:Ուսուցչի կարևոր դերն է նաև ականջալուր լինել երեխայի խոսքին և անկեղծորեն արձագանքել դրանց:Նա ինքնավստահություն է դաստիարակում երեխաների մեջ՝հաշվի առնելով ամեն մի երեխայի զարգացման մակարդակը:Նա պետք է շարունակ փնտրի աշխատանքի այնպիսի ձևեր,որոնք երեխային կառաջնորդի դեպի մտավոր զարգացում՝հարստացնելով նրա գիտելիքներն և ներշնչել ինքնավստահությունը:

Դաստիարակության շնորհիվ ձևավորվում են բնավորության տարբեր ձևեր:Դաստիարակության գործընթացում մասնակից են ծնողը,ուսուցիչը,միջավայրը:Այդ գործընթացում կիրառվում է 3 ոճ՝

1.երեխայի դաստիարակությունը ,,շարունակական պայքար է,,

2.,,Հանգիստ կյանք ցանկացած գնով,,

3.,,Ես սիրում եմ իմ աշակերտներին,սակայն ես հասկանում եմ , երեխաները չեն կարող անել այն,ինչ ուզում են,,:

Ցանկացած ոճի ընտրության դեպքում պետք է ապահովել այն,որ

1.երեխան ապահով զգա

2.երեխան իրեն սիրված զգա

3.երեխան ընկալում ,կարեկցանք զգա

4.երեխան հարգված զգա

5.երեխան գնահատված զգա:

Եթե խոսքը գնում է չշփվող երեխաների մասին,ապա նրանց մոտ պիտի լինեն բոլոր այս 5 կետերը:Սրան զուգահեռ պետք է հաշվի առնել նաև տարիքային առանձնահատկությունները:Կրտսեր դպրոցական տարիքի երեխաները՝

1.դեռևս զգայուն են սխալներ գործելու դեպքում իրենց նկատմամբ կիրառվող պատժի նկատմամբ

2.պետք է տարբերակեն բացասական վարքագիծը և երեխայի անձը

3.առավել լավ են վերահսկում իրենց

4.զարգացնում են սոցիալական հմտությունները

5.ձևավորվում են անհատական առանձնահատկությունները:

Այս ամենը իմանալուց և ուսումնասիրելուց հետո ես ներկայացրել եմ իր հետազոտությունը՝ հիմնվելով իմ բազմամյա տաչիների մանկավարժական գործունեության և փորձի վրա:

Բաժին 2 Թեմայի շուրջ դիտարկումներ

Այս ամենից ելնելով, էլ ունենալով նման աշակերտներ ,կատարել եմ հետազոտություն: Աշխատանքի այս մասում ներկայացնում եմ այն:

1.Երեխայի զարգացման ընդհանուր շրջանակներում գտնվող յուրաքանչյուր աստիճան ունի իր առանձնահատուկ նպատակները:Աշխատանքի ճիշտ կազմակերպման դեպքում կհասնենք մեր առջև դրված նպատակներին:Հաճախ հանդիպում ենք այնպիսի երեխաների,որոնք ընտանիքի միակ երեխան են, չեն հաճախել մանկապարտեզ և դպրոց հաճախելիս ցուցաբերում են անկանոն վարք՝ լացում են մայրիկի հետևից և խաթարում դասարանի ընդհանուր մթնոլորտը: Ուսուցիչների պարտականությունն է ոչ միայն կազմակերպել երեխաների ուսուցում,այլ կրթելու ընթացքում նպաստել բնավորության կազմավորմանը՝խորհրդակցելով մեթոդմիավորման մյուս անդամների հետ:Իմ դասարանում կար այդպիսի աշակերտ:Առաջին դասրանում չէր շփվում,բայց բազմաթիվ աշխատանքներից հետո նա սկսեց կամաց-կամաց շփվել:Երկրորդ դասարանում այդ խնդիրը առկա էր այլ առարկաներ պարապող ուսուցիչների մոտ,բայց աստիճանաբար դա էլ հարթվեց: Այնուհետև այդ աշակերտը երկրորդ դասարանուի ավատին ունեցավ մեծ կորուստ՝ նրա մայրը երկարատև հիվանդությունից հետո մահացավ:Նրա ներաշխարհը նորից խառնվեց,ընկավ ծանր հոգեբանական վիճակի մեջ:Տարբեր մեթոդներ միջոցով փորձել եմ աշակերտին ընդգրկել կոլեկտիվում:Հաճախ նա եղել է ուսուցչի օգնական,ընդգրկվել է հանրօգուտ աշխատանքներում:Աշակերտը հաղթահարեց այդ կորուստը նաև դասընկերների շնորհիվ: Ամառային արձակուրդներին ինձ պարտավորված էի համարում կապ պահել նրա հետ,որպեսզի մեր մեջ անջրպետ չառաջանա:
Այժմ այդ աշակերտը սովորում է երրորդ դասարանում,կոլեկտրվի լիիրավ անդամ է:Իմ կարծիքով մենք կառողացանք լուծել մեր առջև ծառացած խնդիրը:

Կ.Թումասյան

2. ,,Եթե ուսուցիչը սիրում է իր աշխատանքը,նա լավ ուսուցիչ կլինի,իսկ երբ ուսուցիչը սիրում է և՛ իր աշխատանքը, և՛ իր աշակերտին, նա կլինի կատարյալ ուսուցիչ,,:

Ես աշխատում եմ առաջնորդվել այս սկզբունքով:Առաջին հերթին ուսուցիչը պետք է լինի հոգեբան, երեխայի մեջ կարողանա փնտրել,գտնել և ամուր բռնած,նրբանկատորեն առաջ տանել այն ,,թելը'',որը գրեթե չի նշմարվում երեխայի մոտ: Չորս տարի առաջ ունեցա մի այնպիսի աշակերտ,ով չէր հաճախել մանկապարտեզ,ինքնամփոփ էր,չշփվող էր և ուներ մտավոր զարգացման խնդիրներ:Հետագայում նա ներառվեցԿԱՊԿՈՒերեխանե խմբում: Առաջին օրվանից ես ուսումնասիրեցի երեխայի թույլ և ուժեղ կողմերը:Ցանկանալով մտերմիկ,

ջերմ հարաբերություններ ստեղծել իր և իմ միջև, սկսեցի անհատական աշխատանքներ տանել դասերից հետո, օրվա մեջ մի քանի անգամ հաղորդակցվում էինք նաև հեռախոսով, համագործակցում էի մայրիկի և տատիկի հետ:Աշխատանքս տանում էի այնպես, որ իմ անհատական աշխատանքը այդ աշակերտի նկատմամբ դասընկերների կողմից նկատելի չլինի:Ես նրան վերաբերվում էի այնպես, կարծես ես էի նրանից սովորում և դա նրան շատ էր ոգևորում: Չէր շփվում դասընկերների հետ,գրեթե չէր խոսում,դժվարությամբ էր ընկալում ամեն ինչ,դասամիջոց չէր անում:Դասամիջոցներին հետևողական էի,որպեսզի դասընկերների հետ խաղա,դուրս գա դասարանից, ներգրավում էի դասարանում կատարվող բոլոր աշխատանքների մեջ,դասերը ավարտելուց հետո տուն գնա դասընկերների հետ:Եվ փոքր քայլերով, կաթիլ-կաթիլ հասա այն կետին, որ նա դարձավ դասարանի լիարժեք անդամ:Ունեցանք հաջողություն նաև ուսման բնագավառում:Այդ հաջողություններին հասել եմ նաև ներառական կրթության մանկավարժների և դասարանում սովորող մյուս աշակերտների ջանքերի շնորհիվ: Այժմ այդ աշակերտը սովորում է 7-րդ դասարանում, և հետաքրքրվելով նրա մասին դասավանդող ուսուցիչներից, աշակերտը այլևս հոգեբանական աջակցության և հասարակության մեջ ներգրավելու խնդիրներ չունի:Իմ կարծիքով ես հասա իմ նպատակին:

Կ.Թումասյան

3.,,Յուրաքանչյուր մարդու բնավորության մեջ ինչ –որ բան կա,որ հնարավոր չէ կոտրել՝ դա բնավորության հիմնական մասն է,,’’: Գ. Լիխտենբերգ

Ինչպես վերը նշվեց, բնավորության ձևավորման համար դեր է խաղում խառնվածքը,շրջակա միջավայրի ազդեցությունը և հիմնական կողմը՝ շփումը:Իսկ չշփվող երեխաների շրջանում ամեն ինչ այլ է դառնում:Ստորև ներկայացնում եմ իմ աշխատանքային փորձը նման աշակերտի հետ: Նոր առաջին դասարան ընդունելիս ուսումնասիրեցի իմ աշակերտների տվյալները և ինձ պարզ դարձավ,որ դասարանում լինելու է դժվարություններով աշակերտ: Մի քանի օր այդ աշակերին ուսումնասիրելուց հետո առաջին քայլն հետևյալն էր.հանձնարարեցի, որ յուրաքանչյուր աշակերտ բնութագրի իր դասընկերներին:Բոլորն էլ այդ աշակերտի մասին նույն կարծիքն արտահայտեցին:Այդ աշակերտը հրաժարվեց որևէ մեկի մասին խոսել:Երբ իմ դիտարկումը պարզ դարձավ,սկսեցի աշխատել այդ աշակերտի հետ:Հիմք ընդունեցի տարիքային առանձնահատկությունները՝հենվելով զգացական կողմի վրա:Աստիճանաբար, կամաց-կամաց այդ երեխայի համար դարձա մտերիմ:Աշխատելու ընթացքում կիրառել եմ նաև հեքիաթաթերապիա,դիմել եմ նաև դպրոցում աջակցող թիմի օգնությանը: Օրինակ այդ

աշակերտի համար պատմում էի հեքիաթ և թողնում էի կիսատ:Աշակերտս ավարտում էր հեքիաթը,առանց հասկանալու,որ պատմում է իր խնդրի մասին:Աշխատանքիս ընթացքում,սակայն ունեցել էի մեկ բացթողու,ես իմ դիտակետում ունեի միայն այդ աշակերտին:Երկրորդ դասարանում մնացած աշակերտների հետ ևս սկսեցի այդ ուղղությամբ աշխատանքներ տանել:Աշխատանքի ընթացքում վերահսկում էի այդ աշակերտի պահվածքը և՛ դասի ընթացքում, և՛ դասամիջոցներին:Հաճախ հետևել եմ նաև դպրոցից տուն գնալու ժամանակ: Ասեմ նաև, որ այդ աշակերտը նկարում էր շատ լավ և տարբերվում էր բոլորից: Բացատրում է նկարը յուրովի:

Երբ ամեն ինչ իմ կարծիքով հարթվել էր, ես կիրառեցի հոգեբանական թեստ ,,Նկարի՛ր քո դասարանը’’:Բոլորի մոտ ամեն ինչ գրեթե նույնն էր:Ամբողջ դասարանի աշակերտները համախմբված էին նկարներում, իսկ այդ աշակերտը բոլորի հետ նկարել էր նաև ինձ:

Այսպիսով կատարել եմ հետևյալ քայլաշարը.

1.կատարել եմ դիտարկումներ

2.հենվել եմ աշակերտների զգայական կողմի վրա

3.անհատական աշխատանքներ եմ կատարել

4.պահել եմ ուսուցիչ-ծնող կապը

5.դիտարկվող աշակերտի արժանիքների նկատմամբ հարգանք եմ դրսևորել

6.փորձել եմ ստեղծել վստահելի մթնոլորտ

7.փորձել եմ ակտիվ մասնակցություն ունենալ աշակերտի առօրյայում

8.ընդարձակել եմ երեխայի շփման ոլորտը

9.կիրառել եմ հոգեբանական թեստեր/նկարել/

10.օգտվել եմ հեքիաթաթերապիայից

11.կիրառել եմ դերային խաղեր:

Կ.Թումասյան

Իմ 37-ամյա մանկավարժական գործունեության ընթացքում ունեց եմ երկու աշակերտ,ովքեր դժվարությամբ են շփվել շրջապատի հետ:Նրանք ըստ Կարլ Լերնգարդի դասակարկգման,պատկանում էին դիսթիմի տիպին:Ճիշտ է այն մոտեցումը,որ բնավորության

ծագման աղբյուրներն ու առաջին դրսևորումները պետք է փնտրել ընտանիքում:Երկու աշակերտն էլ ունեին ընտանեկան պայմանների մեծ ազդեցություն իրենց շփվող,ինքնամփոփ բնավորության ձևավորման հիմքում[4]:Տարրական դպրոցում էլ աչքի չեն ընկել շփվողականությամբ,բայց միչին և ավագ դպրոցում,երբ ընդլայնվում է երեխայի հաղորդակցման ոլորտը զարգանում և ամրապնդվում են բնավորության կամային գծերը,բարոյական որակները,այդ չշփվողականությունը ավելի ակնառու էր դարձել:Տարրական դպրոցում նրանք ունեին ցածր շփվողականություն,քչախոս էին,նրանց մոտ դոմինանտ էր հոռետեսական տրամադրությունը:

Այս երեխաների հետ աշխատել եմ ուժերի գերլարումով՝ մսանակից դարձնելով նաև նրանց համադասարանցիներին:Առանձնազրույցների ընթացքում երեխաներին բացատրել եմ ,որ հնարավոր բոլոր միջոցներով /զրույցներ,հանդիպումներ/ պիտի աշխատենք նրանց վստահությանն արժանանալ:Որոշել ենք հանդուրժող լինել նրանց սառը պահվածքի նկատմամբ և աստիճանաբար ինտեգրենք մեր միջավայրին:Փորձել եմ զրուցել ծնողների հետ, նաև այն անձանց ովքեր իմ կարծիքով կարող էին հեղինակություն լինել նրանց համար:

Վերջնարդյունքը երկու աշակերտի համար տարբեր ստացվեց՝չնայած իմ և համադասարանցիների մեծ ջանքերին: Առաջին աշակերտը համարյա այդպես էլ ավարտեց դպրոցը:Ծնողի հետ իմ ցանկացած առանձնազրույց արդյունք չէր տալիս,որովհետև նույն բնավորությունն ունեին նրանք՝հասարակությունից մեկուսացած, բոլորից դժգոհ, բոլորին մեղադրող:Այդ երեխայի բնավորության մեջ համադասարանցիներն ու ես փոփոխություն, ջերմություն չզգացինք, բայց այս տարի նրա մեջ զգացվեց ջերմություն, սառուցը հալվել էր:

Երկրորդ աշակերտին / նրան ընտանեկան խնդիրն այն էր, որ հայրը գնացել էր արտագնա աշխատանքի և այլևս չէր վերադարձել՝ տղային թողնելով առանց հայրական խնամքի/ավելի հեշտ ինտեգրեցինք մեր միջավայրին:Մի քանի աշակերտ փորձեցին մտերմանալ նրա հետ, հասանք արդյունքի, այժմ նա համեմատաբար շփվում է բոլորի հետ, ունի իր մտերիմը:

Ուժեղ բնավորություն ունեն այն մարդիկ, ովքեր մեծ խնդիրներ են դնում աշխատանքում և հասնում դրանց լուծմանը:Իմ առաքելությունն եմ համարում դաստիարակել հասարակությանը, ազգին պիտանի ուժեղ բնավորությամբ մարդիկ:

Կ.Թումասյան

Եզրակացություն

Այսպիսով կատարելով բազմաթիվ դիտարկումներ, կիրառելով տարբեր մեթոդներ մենք հանգել ենք հետևյալին.

1.Ցանկացած բնագավառում ուսուցչի գերխնդիրն է ձևավորել հասրակությանը պիտանի անձ,ով ունի բարձր արժեհամակարգ,կարողանում է շփվել և իր ներդրումն ունենալ այդ հասարակությունում:Սական մեծ է նաև ծնողական գործոնը այս հարցում:

2.Կիրառված մեթոդների միջոցով հնարավոր է հասնել այն բանին, որ չշփվող աշակերտը դառնա կոլեկտիվի լիիրավ անդամ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Դաստիարակության դրական մոտեցումներ,,-Երևան 2016

2. Леонгард Карл Акцентуированные личноцти. Из дом феникс, 2000

3. www.Wikipedia.org

4. Հոգեբանության դասընթաց՝՝ Ա. Խուդոյան